Հայաստան. կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն

Երևան, Հայաստան
Նոյեմբեր, 2022

Բովանդակություն

- Մեթոդաբանություն
- Հարցվողների դեմոգրաֆիական տվյալներ
- Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ կարծիքներ
- Տեղեկատվության թափանցիկությունը և մարմինների/պաշտոնյաների անկախությունը
- Կոռուպցիայի նվազեցման վերաբերյալ կարծիքներ
- Պետական մարմինների՝ կոռուպցիայի մեջ ներգրավվածության վերաբերյալ ընկալումները
- Կոռուպցիայի մեջ ներգրավվածության վերաբերյալ ընկալումները՝ ըստ ոլորտների
- Կաշառք տալու շարժառիթները
- ԿԿՀ-ի և նրա գործառույթների մասին իրազեկվածությունը
- Կառավարության կողմից իրականացվող գործողությունների/նախագծերի մասին իրազեկվածությունը
- Հակակոռուպցիոն նախագծեր
- Կոռուպցիայի՝ ընկալվող ազդեցությունը
- Կոռուպցիայի՝ դեպքերի հաճախականության և կաշառքի չափի մասին պատկերացումները
- Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրները
- Կաշառք վերցնելու պատճառները՝ ըստ քաղաքացիների
- Քաղաքացիների՝ հաստատությունների հետ առնչությունը
- Անօրինական վճարումների մասին պատկերացումները
- Կոռուպցիայի դեպքերի մասին հայտնելու պատճառները՝ ըստ քաղաքացիների
- Կոռուպցիայի նվազեցման գործողություններում ներգրավվելու պատրաստակամությունը
- Հակակոռուպցիոն գործողությունների շուրջ հասարակական ընկալումները

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Տվյալների հավաքագրում՝** ՀՌԿԿ-Հայաստան
- **Ամիս-ամսաթիվ՝** հոկտեմբեր-նոյեմբեր, 2021թ.
- **Ընտրանքի չափ՝** 1,520 հարցված
- **Ընտրանքի մեթոդ՝** պատահական կլաստերային և շերտավորված ընտրանք, քվոտավորում՝ ըստ սեռի և տարիքի
- **Տվյալների հավաքագրման մեթոդ՝** դեմ-առ-դեմ հարցումներ համակարգչի օգնությամբ (CAPI)
- **Հարցվողների ընտրություն՝** Երևանի և Հայաստանի բոլոր մարզերի 18+ բնակչություն, հաջորդող ծննդյան օրվա մեթոդով
- **Սխալի սահման՝** 2.5%

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- Կին – 55%, Տղամարդ – 45%
- Տարիք 18-35 – 30%, 36-55 – 38%, 56+ – 31%
- Երևան – 38%, քաղաքային այլ բնակավայրեր – 28%, գյուղական բնակավայրեր – 34%

Կոռուպցիայի վերաբերյալ ընկալումներ

Հարցվողների ճնշող մեծամասնությունը նշել է, որ **«Պետական պաշտոն զբաղեցնող անձին գումար առաջարկելը՝ իր օգտին որոշում, գործողություն կատարելու կամ չկատարելու համար»** կոռուպցիայի դրսևորում է:

Որքանո՞վ եք համաձայն, որ այս գործողությունները կոռուպցիայի դրսևորումներ են:



ԲԱՐՁՐ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Հարցվողների կեսից ավելը կոռուպցիոն ռիսկ են տեսնում «Գործարարների կողմից կուսակցություններին/դաշինքներին կատարվող նախընտրական քարոզարշավի համար նվիրատվություններ» անելու մեջ:

Որքանո՞վ եք համաձայն, որ այս գործողությունները կոռուպցիայի դրսևորումներ են:

Նշում. պետական պաշտոնյաներին պարբերաբար պարգևավճարներ տալն ընդհանրապես համաձայն չեն որպես բարձր կոռուպցիոն ռիսկ դիտարկել առավել շատ Երևանում ապրող քաղաքացիները:



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հայաստանում «**Հովանավորչությունը (ԽԾԲ), մերձավոր ազգականներին պաշտոնի նշանակումը**» կոռուպցիայի ամենատարածված դրսևորումներն են (82%):

Հայաստանում ներկայումս որքանո՞վ են տարածված կոռուպցիայի հետևյալ դրսևորումները (%)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Ժողովրդագրական որոշ տվյալներ

“Պետական բյուջեի մսխումը կամ յուրացումը ”

Չափազանց/ավելի շուտ տարածված է կանանց կարծիքով (n=563, 66,7%), ինչպես նաև Երևանի (n=381, 66,1%) և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների կարծիքով (n=294, 69%):

“Գնումների դեպքում «օտկատների» կամ մաղարիչի բաշխում”

Չափազանց/ավելի շուտ տարածված է 35-ից ցածր տարիքի (18-35) (n=306, 66.5%), ինչպես նաև այլ քաղաքային բնակավայրերի քաղաքացիների կարծիքով (n=288, 55,6%):

“Փողերի լվացում”

Չափազանց/ավելի շուտ տարածված է Երևանի (n=408, 70,9%) և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների կարծիքով (n=286, 60,2%):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ/ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Հարցվողների 70%-ը նշել է «**քաղաքական կուսակցությունների**» ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը որպես առավել ոչ թափանցիկ, և գրեթե **80%-ը** նշել է, որ «**կուսակցությունները և դաշինքները**» կախված են օլիգարխների եւ բիզնեսի շահերից:

Ձեր կարծիքով որքանո՞վ է [.....] ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ ինֆորմացիան բաց/թափանցիկ (հայտնի) (%)



Ձեր կարծիքով, որքանո՞վ են հետևյալ մարմինների/պաշտոնյաների շահերը կախված օլիգարխների, բիզնեսի շահերից (%)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

2021թ.-ին, հարցվողների ավելի մեծ տոկոսն է նշել, որ «**ընդհանրապես հնարավոր չէ նվազեցնել կոռուպցիան**» Հայաստանում **(գրեթե 23%)**, համեմատած 2019թ.-ի հետ **(գրեթե 5%):** Միևնույն ժամանակ, 2019թ.-ին հարցվողների ավելի մեծ տոկոսն է նշել, որ **«կոռուպցիան հնարավոր է էականորեն նվազեցնել» (գրեթե 44%)** , համեմատած 2019թ.-ի հետ **(գրեթե 21%):**

Որքանո՞վ է հնարավոր նվազեցնել կոռուպցիան Հայաստանում (%)



Նշում. հիմնականում կանայք, (n = 567), 65-ից բարձր տարիքի քաղաքացիները (n = 164) հավատում են, որ կոռուպցիան ընդհանրապես չի կարող նվազեցվել/կարող է նվազեցվել միայն մասամբ:

ԱՆՁԱՆՑ/ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Հարցվողների մոտ մեկ երրորդի կարծիքով, **դատավորները/դատարանները, ԶԼՄ-ները, Հայ Առաքելական Եկեղեցին** մեծապես ներգրավված են կոռուպցիայի մեջ:

Ի՞նչ կասեք ներկայումս հետևյալ անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու աստիճանի մասին:



ԱՆՁԱՆՑ/ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)

Հարցվողների մոտ մեկ երրորդի կարծիքով, **դատավորները/դատարանները, ԶԼՄ-ները, Հայ Առաքելական Եկեղեցին** մեծապես ներգրավված են կոռուպցիայի մեջ:

Ի՞նչ կասեք ներկայումս հետևյալ անձանց/հաստատությունների կոռումպացված լինելու աստիճանի մասին



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Հարցվողների կեսից ավելին նշել է, որ կոռուպցիան տարածված է **առողջապահության, զանգվածային լրատվամիջոցների և ընտրական համակարգի/գործընթացների** ոլորտներում:

Խնդրում եմ, ասեք, թե ըստ ձեզ, որքանո՞վ է կոռուպցիան տարածված այս ոլորտներից և ծառայություններից յուրաքանչյուրում (%)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ (շարունակություն)

Հարցվողների կեսից ավելին նշել է, որ կոռուպցիան տարածված է **առողջապահության, զանգվածային լրատվամիջոցների և ընտրական համակարգի/գործընթացների** ոլորտներում:

Խնդրում եմ, ասեք, թե ըստ ձեզ, որքանո՞վ է կոռուպցիան տարածված այս ոլորտներից և ծառայություններից յուրաքանչյուրում (%)



ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

«Խնդիրը լուծելու այլ՝ օրինական տարբերակ չկա»-ն և **«պատժից/տուգանքից/այլ պատասխանատվությունից խուսափել»-ը կաշառք տալու** ամենատարածված դրդապատճառներն են:

Կաշառք տալու հիմնական շարժառիթները (%)



ԿԿՀ-Ի ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հարցվողների 9.4%-ը լսել է ԿԿՀ-ի մասին և տեղյակ է նրա գործառույթներից, և նրանց գրեթե կեսը համարում է, որ ԿԿՀ-ն արդյունավետ է գործում կոռուպցիայի դեմ պայքարում:

Նշում: *2019-ին ԿԿՀ-ի մասին լսել էր և տեղյակ էր նրա գործառույթներից ընդամենը* ***1,1% հարցված:***

Երբևէ լսե՞լ եք ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) մասին (%)



Որքանո՞վ է արդյունավետ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կոռուպցիայի դեմ պայքարում: (% ՝ "ես տեղյակ եմ նրա գործառույթների մասին" –ից "այո"պատասխաններից, n=143)



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հարցվողների **57%-ը տեղյակ է տարբեր պետական կառույցների թեժ գծերի մասին:**

Ասացեք, խնդրեմ, Դուք տեղյա՞կ եք կառավարության կողմից իրականացված/ող հետևյալ գործողությունների/նախագծերի մասին (%)



ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Շատ հարցվողներ հավանություն են տալիս «**Դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգմանը (վեթինգ)**» որպես հակակոռուպցիոն նախագիծ:

2021թ.-ին հարցվողների ավելի քիչ տոկոսն է **(գրեթե 51%)** ներկայիս կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը գնահատել արդյունավետ՝ համեմատած **2019թ.-ի հետ (գրեթե 82%):**

Կառավարությունը հայտնել էր մի քանի հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին, որոնց մի մասն արդեն օրենքի կարգավիճակում է:
Դուք հավանություն տալի՞ս եք, թե ոչ հետևյալին (%)



Ըստ Ձեզ, որքանո՞վ է արդյունավետ ՀՀ ներկայիս կառավարության պայքարը կոռուպցիայի դեմ (%)



Ձեր կարծիքով, որքանո՞վ է Հայաստանի ներկայիս կառավարությունը անկեղծ կոռուպցիան հաղթահարելու հարցում (%)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

2021 թ.-ին հարցվողների գրեթե 37%-ի, իսկ 2019 թ.ին գրեթե 38%-ի համար՝ կոռուպցիայի ընկալվող ազդեցությունը իրենց և իրենց շրջապատի/համայնքի վրա մեծ է եղել: Միևնույն ժամանակ, **2021 թ.-ին** նրանց ավելի մեծ տոկոսն է նշել, որ **«ազդեցություն չունի»** (**գրեթե 33%),** համեմատած **2019 թ-ի հետ (գրեթե 25%):**

Ձեր կարծիքով, ներկայումս որքա՞ն մեծ է կոռուպցիայի ազդեցությունը Ձեր և Ձեր շրջապատի/համայնքի վրա (%)



Ովքե՞ր են համարում, որ կոռուպցիան մեծ ազդեցություն ունի իրենց շրջապատի վրա:



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՇԱՌՔԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

2021 թ.-ին հարցվողների ընդամենը **67%-ն** է եղել այն կարծիքին, որ կաշառքի դեպքերի հաճախականությունը **նվազել է՝ ի տարբերություն 2019 թ.**-ին, երբ նման կարծիք ունեին հարցվողների **91%-ը**: Մյուս կողմից, 2021 **թ.-ին** հարցվողների ավելի քիչ տոկոսն է նշել, որ պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի չափը նվազել է **(գրեթե 43%)** համեմատած **2019 թ.-ի հետ (գրեթե 81%):**

Պետական պաշտոնյաների կողմից կաշառք պահանջելու/ակնկալելու դեպքերի հաճախականության փոփոխությունների վերաբերյալ պատկերացումները (%)



Պետական պաշտոնյաների կողմից պահանջվող/ակնկալվող կաշառքի չափի փոփոխությունների վերաբերյալ պատկերացումները (%)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

2021 թ.-ին շատ հարցվողներ կոռուպցիայի վերաբերյալ իրենց գնահատումներում հիմնվել են «**լրատվամիջոցների կողմից տրամադրվող տեղեկատվության**» վրա, չնայած, որ հարցվողների մեկ քառորդը **(մոտավորապես 23%)** նշել է, որ Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն առկա չէ որևէ լրատվամիջոցում:

Ինչի՞ վրա եք հիմնվում կոռուպցիայի մակարդակը գնահատելիս:(%)



Նշեք, խնդրեմ, երեք զանգվածային լրատվամիջոց, որոնցից կարելի է վստահելի նորություններ իմանալ Հայաստանում կոռուպցիայի մասին (%). (բաց հարց)



ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հարցվողների **29%-ը** համարում է, որ մարդիկ կաշառք են վերցնում, քանի որ **ցանկանում են ավելի լավ ապրել:** Հարցվողների մոտավորապես **41%-ը** մատնանշել է, որ մարդիկ հրաժարվում են կաշառք վերցնել **պատժվելու բարձր ռիսկի պատճառով:**

Պատկերացրեք որևէ մեկին կաշառք են առաջարկել, նշվածներից ո՞րը կլինի նրա կողմից կաշառքը վերցնելու հիմնական շարժառիթը (%)



Պատկերացրեք որևէ մեկին կաշառք են առաջարկել, նշվածներից ո՞րը կլինի հրաժարվելու հիմնական դրդապատճառը (%)



Հարցվողների մեծամասնությունը նշել է **Ոստիկանությունը** որպես հակակոռուպցիոն մարմին, և գնահատում է նրա գործունեությունը որպես արդյունավետ:

Ձեր կարծիքով, Հայաստանում, որքանո՞վ են արդյունավետ գործում հակակոռուպցիոն մարմինները:(%)



ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

Հարցվողների ճնշող մեծամասնությունը նշել է, որ իրենք առնչություն են ունեցել կոմունալ ծառայությունների **(գրեթե 77%), առողջապահական հաստատությունների (գրեթե 74%) և կապի ծառայությունների հետ (գրեթե 71%):**

Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք գործ ունեցե՞լ եք հետևյալ հաստատությունների հետ կամ օգտվե՞լ եք հետևյալ ծառայություններից (%)



ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

2019 թ.-ին մաքսային ծառայության հետ առնչված հարցվողների ընդամենը **2.5%**-ն **(2)** է նշել, որ իրենք կաշառք/հավելյալ վճար են տվել **մաքսային ծառայությանը**, մինչդեռ 2021 թ.-ին նրանց բաժինը գրեթե **23%** է **(11)**: Մաքսային ծառայությունների հետ առնչվողների բաժինը **2021 թ.-ին 3.2% (n=48)** է կազմել, իսկ **2019 թ.-ին՝ 6.3% (n=94) :**

Ստիպված եղե՞լ եք հավելյալ վճար տալ (այո, %)



***Նշում:** Հարցազրուցավարների վերապատրաստման ընթացքում տեղեկացվել է, որ խոսքը գնում է ոչ պաշտոնական հավելյալ վճարների մասին, սակայն սա չի նշանակում, որ հարցվողները որպես հավելյալ վճար չէին կարող ընկալել օրենքով սահմանված վճարովի ծառայությունները, օրինակ ԴԱՀԿ-ում և մաքսային ծառայությունում:*

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼԸ

Հարցվողների գրեթե **50%**-ը նշել է, եթե կոռուպցիայի զոհ դառնան, **չեն հայտնի** այդ մասին: Մինչդեռ մոտ 41%-ը կհայտնի այդ մասին:

Եթե անձամբ առնչվեք կոռուպցիայի հետ, այդ մասին կհայտնե՞ք համապատասխան մարմիններին:



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2021 թ.-ին, հարցվողների **57%-ը** համարել է, որ կոռուպցիայի դեպքերի մասին հայտնելը **կքննադատվի կամ կհամարվի «գործ տալ»:**

Հայաստանում ոմանք տարբեր պատճառներով չեն ցանկանում հայտնել կոռուպցիոն դեպքերի մասին: Ձեր կարծիքով՝ որո՞նք են կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու պատճառները (այո, %)

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հարցվողների գրեթե **կեսը պատրաստ է գործել/ներգրավվել** կոռուպցիայի նվազեցմանն ուղղված գործողություններում:.

Պատրա՞ստ եք/ցանկանու՞մ եք մասնակցել/ներգրավվել կոռուպցիան նվազեցնելու գործողություններում (%)



Եթե ոչ, ապա՝ ինչու՞: (%, n=776) ***(բաց հարց)***



ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 թ.-ին, հակակոռուպցիոն գործողություններում մասնակցությունը հիմնականում ենթադրել է հանրային ծառայությունների համար կաշառք տալուց խուսափելը **(51%):**

Նշվածներից ո՞րն եք երբևէ կատարել կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով (այո, %)



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիների հակակոռուպցիոն վարքագծի և առավել կոռումպացված համարվող ոլորտների վերաբերյալ

- ✓ Թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից մոտ չորս (4) տարի անց քաղաքացիների մոտ 63%-ը գտնում է, որ կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ:
- ✓ Քաղաքացիների կողմից կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու հիմնական պատճառ է հասարակության քննադատությանն արժանանալու վախը: Քաղաքացիների մեկ երրորդից ավելին նշել է վախը, որ կպատժվեն՝ կկորցնեն իրենց աշխատանքը, կվտանգվեն: Միևնույն ժամանակ, որպես կոռուպցիայի մեջ ներքաշվելուց հրաժարվելու հիմնական պատճառ քաղաքացիները նույնպես առավել հաճախ նշել են «պատժվելու բարձր ռիսկը»: Եվ միայն քաղաքացիների 19%-նէ նշել, որ կոռուպցիայից պետք է հրաժարվել, քանի որ դա հանցագործություն է:
- ✓ Ըստ հանրային ընկալումների, կոռումպացված լինելու վարկանիշի տեսանկյունից վատթարացել են ԶԼՄ-ների և Հայ առաքելական եկեղեցու դիրքերը, բարելավվել է Մարդու իրավունքների պաշտպանի դիրքը:
- ✓ Դատավորները և դատարանները նույնպես ընկալվում են որպես առավել կոռումպացված կառույցներ:
- ✓ Հանրությունը համարում է, որ կոռուպցիան առավել տարածված է առողջապահական, լրատվական ոլորտներում և ընտրական գործընթացներում, և այն քիչ է տարածված կապի, կոմունալ և համայնքային ծառայություններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Քաղաքացիների մի մասը պետական մարմինների գործառույթներին ծանոթանում է նաև այդ մարմիններից ծառայություններ ստանալիս կամ դրանց անմիջականորեն առնչվելիս: Հետևապես՝ այդ մարմինների գործառույթների վերաբերյալ քաղաքացիների իմացության շրջանակը սահմանափակվում է քաղաքացիների կողմից պահանջվող/ստացվող ծառայությունների շրջանակով:

- ✓ Հանրության կողմից առավել հազվադեպ նշվել է հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիների ներգավման անհրաժեշտությունը: Սա նաև կապված է այն հանգամանքի հետ, որ քաղաքացիների կեսից ավելին (54%) գտնում է, որ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի համար գլխավոր պատասխանատուն կառավարությունն է կամ իշխող քաղաքական ուժը, և 15%-ն է միայն կարծում, որ կոռուպցիոն երևույթների համար պատասխանատուն բոլորն են:

- ✓ Ընդ որում, հակակոռուպցիոն նախաձեռնությունների ավելի հակված են մասնակցել գյուղաբնակները և 18-35 տարեկանները, այսինքն՝ երիտասարդները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքների, օրենսդրական անկատարության և պետական մակարդակով կարգավորումների վերաբերյալ

- ✓ Քաղաքացիների ընկալմամբ կոռուպցիայի տարածմանը նպաստող առավել հաճախ նշվող գործոններն են հանրության կողմից օրենքներին չհետևելը, օրենքների անկատարությունը և տնտեսական ծանր վիճակը/աղքատությունը: Առավել քիչ նշված գործոնը հակակոռուպցիոն կրթական/իրազեկման ծրագրերի սակավությունն է:
- ✓ Քաղաքացիների ընկալմամբ կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթներ են խնդիրները օրինական տարբերակով լուծելու անհնարինությունը, օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից խուսափելը և պատժից/տուգանքից խուսափելը:
- ✓ Հանրության ճնշող մեծամասնությունը հավանություն է տալիս ՀՀ կառավարության կողմից արդեն իրականացվող կամ դեռևս օրենքի կարգավիճակում գտնվող հակակոռուպցիոն հիմնական նախաձեռնություններին:
- ✓ Միևնույն ժամանակ, քաղաքացիների ավելի քան 45.8%-ը անարդյունավետ է գնահատել կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը: Այն ավելի արդյունավետ դարձնելու համար, նրանց ընկալմամբ, կառավարության առաջնահերթություններից պետք է լինեն պաշտոնատար անձանց եկամուտների և ունեցվածքի հայտարարագրումն ու ստուգումը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն ու պատժի անխուսափելիության ապահովումն իրավապահների կողմից և օրենքներում ու գործադիր իշխանության ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի վերացումը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիզնեսի և քաղաքականության՝ կոռուպցիայի կանխարգելմանը խոչընդոտող փոխկապվածության վերաբերյալ

- ✓ Բնակչության մեծամասնությունը համարում է, որ քաղաքական կուսակցությունների և պետական պաշտոնյաների շահերը կախված են օլիգարխների, բիզնեսի շահերից: Մասնավորապես, խոսքը կուսակցությունների/դաշինքների, բարձրաստիճան պաշտոնյաների և միջին օղակի պաշտոնյաների շահերի՝ օլիգարխների, բիզնեսի շահերից կախվածության մասին է:

- ✓ Քաղաքացիների մեծամասնության ընկալմամբ կուսակցությունների/դաշինքների, ԶԼՄ-երի, նախընտրական քարոզարշավի և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկատվությունը թափանցիկ չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող մարմինների վերաբերյալ

- ✓ Հանրությունը քիչ է տեղյակ, թե Հայաստանում որ պետական մարմինները և հասարակական կազմակերպություններն են իրականացնում հակակոռուպցիոն գործունեություն, քանի որ, ինչպես ցույց տվեց այս ուսումնասիրությունը, քաղաքացիների շրջանում շատ ցածր է այդ կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեություն իրականացնելու, ներառյալ կոռուպցիայի հարցերում քաղաքացիներին տեղեկատվական աջակցություն տրամադրելու մասին տեղեկացվածությունը: Քաղաքացիների կարծիքով ոստիկանությունն է այն հիմնական հաստատությունը, որին քաղաքացիները կդիմեին՝ պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծի մասին տեղեկացնելու համար:

- ✓ Ոստիկանության հակակոռուպցիոն գործունեությունն արդյունավետ է գնահատել տվյալ մարմնի հակակոռուպցիոն ֆունկցիաներին տեղյակ 13,6% քաղաքացիների 73%-ը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Սա նաև ցույց է տալիս, որ չկա հանրային ընկալում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ պատժիչ գործառույթներ իրականացնող մարմինների կամ՝ պատժիչ և կանխարգելիչ գործառույթների տարանջատման վերաբերյալ:

- ✓ Քաղաքացիները որպես կոռուպցիայի մասին հայտնելու միջոց նշել են նաև թեժ գծերի առկայությունը Հայաստանում, տարբեր գերատեսչություններում:

- ✓ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին տեղյակ է քաղաքացիների մոտավորապես կեսը (49%), սակայն հարցվողների ընդամենը 9,4%-ն է տեղյակ վերջինիս գործունեության/գործառույթների մասին: Հարկ է նշել, որ ըստ 2019 թ.-ի հարցման՝ ԿԿՀ-ի/էթիկայի հանձնաժողովի գործունեության/գործառույթների մասին տեղյակ էր քաղաքացիների միայն 1,1%-ը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոռուպցիայի դրսևորումների ընկալման վերաբերյալ

- ✓ Կոռուպցիան հանրության կողմից առավելապես ընկալվում է որպես պետական պաշտոնյաներին և նրանց կոռուպցիոն գործունեությանը վերաբերող երևույթ:

- ✓ Հանրության շրջանում համեմատաբար ավելի փոքր է այն մարդկանց բաժինը, որոնք համարում են, որ հետևյալները կոռուպցիոն դրսևորումներ են՝

- ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների օրը շահադիտական նպատակով ընտրական հանձնաժողովի անդամներին սննդով ապահովելը,
- պետական պաշտոնին զուգահեռ ձեռներեցությամբ զբաղվելը,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ

- ✓ Քաղաքացիների համար տեղեկատվության հիմնական աղբյուրներ են ԶԼՄերը, գրեթե նույն չափով նաև ընտանիքի անդամները/ազգականները/ընկերները/ծանոթները, ինչպես նաև (երրորդ տեղում) սոցիալական ցանցերը:

- ✓ Տեղեկատվության հավաստիության առումով առավել վստահելի հեռուստաընկերություններ են համարվում «Հանրայինը», «Արմենիա» ՀԸ-ն և «Շանթ» ՀԸ-ն: Միևնույն ժամանակ, ոչ մի հեռուստաընկերությանը չվստահող հարցվածների թիվը (22,5%) գերազանցում է նույնիսկ առավել վստահելի համարվող՝ Հ1-ին վստահողների թվին (17,4%): Ընդհանուր առմամբ, համեմատած 2019 թ.-ի հետ, քաղաքացիների շրջանում մոտ 20%-ով աճել է կոռուպցիայի շուրջ տեղեկատվություն ստանալու ցանկությունը:

- ✓ Ուստի, ՀՀ քաղաքացիները չունեն կոռուպցիայի մասին տեղեկատվության արժանահավատ լրատվական աղբյուր:

- ✓ Ընտանիքի անդամներից/ազգականներից/ընկերներից տեղեկանալու պրակտիկան պարունակում է լուրջ սոցիալական ռիսկեր:

Շնորհակալություն

CRRC – Armenia

info@crrc.am
(+374 10) 57 48 98, 57 48 68
47/1 Tigran Mets ave.
Yerevan 0018, Armenia